15/04/2024

Երևանի քաղաքապետ
Հարգարժան պարոն Տիգրան Ավինյանին
ՀՀ քաղաքացի Ստեփան Աղազարյանից

Դիմում

Ինովացիոն տեխնոլոգիաների հասապարգսաս «Սեդա Ակադոմիա» Տեխնոլոգիական հասարակական կազմակերպությունը սկսում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս, օգտագործելով բոլոր այն կառույցների ներուժը, ովքեր հաստատված են միասնական գաղափարների, շնորքի, հարգանքի, խաղաղության, հասարակական դրական կապերի և հարաբերությունների մեջ:

Մեր անդրանիկ միջոցառման հակիրճ նկարագրությունը՝ Երևանում:

2024 թ.ի ապրիլի 24ի գիշերը՝ 22:00-ին, Երևանի 5՝ Սուրբ Սարգիս, Սուրբ Հովհաննես Մկրտիչ, Սուրբ Ջորավոր, Սուրբ Աննա և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների բակերում հավաքվում են մի խումբ երիտասարդներ, իրենց ձեռքում ունենալով մեկական կանթեղ: Հոգևորականների օրհնությամբ նրանք վառում են իրենց ձեռքի մոմերն ու խաղաղ քայլերթով՝ ենթարկվելով երթևեկության կանոններին, նախանշված փողոցներով, հավաքվում են Հանրապետության հրապարակում:

Օրվա վերջին ժամին՝ ընդհամենը 5՝ 7, բեպեների ընթացքում, Լռություն բանաստեղծության հնչյունների ներքո, մտնում են՝ 69 մետր երկայնքով, թեների՝ 42 մետր բացվացքով, հսկայական խաչի պատկերի մեջ, այնուհետև՝ միասին, աղոթք են բարձրացնում՝ միլիոն ու կես անմեղ Սուրբ նահատակների հոգիների հանգստության և աշխարհի խաղաղության համար: Որից հետո շտապ դուրս են գալիս երթևեկելի մասից ու հեռանում՝ իրենց հետ տանելով խաղաղության լույսի սիմվոլ՝ կանթեղները:

Եկեղեցիներից դեպի Հանրապետության հրապարակ տանող երթուղիներն են.

Սուրբ Սարգիս եկեղեցու բակից՝ Գ. Լուսաբորիչ փողոցի երկու մայթերով, մինչև՝ քաղաքապետարան, այնուհետև Վազգեն Սարգսյան փողոցով մինչև հրապարակ:

Սուրբ Հովհաննես Մկրտիչ Եկեղեցու բակից՝ Կոնդի փողոցներով, մինչև գլխավոր փոստ, հետո՝ Սարյան, Ամիրյան փողոցներով մինչև՝ Հանրապետության հրապարակ:

Սուրբ Ջորավոր եկեղեցու բակից, Փարպեցի, Պուշկին, Աբովյան փողոցներով, մինչև՝ Հանրապետության հրապարակ:

Սուրբ Աննա եկեղեցու բակից՝ Սայաթ Նովա, Նալբանդյան փողոցներով մինչև՝ Հանրապետության հրապարակ:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակից՝ Տիգրան մեծ պողոտայով մինչև՝ Հանրապետության հրապարակ:

Խնդրում եմ թույլատրել և համագործակցել միջոցառման կազմակերպմաը, որը լիարժեք համապատասխանում է՝ ՀՀ Կառավարության «Խաղաղության խաչմերուկ» գաղափարածոությանը: Կանխավ շնորհակալ եմ

ՀՀ քաղաքացի՝ Ստեփան Աղազարյան

15.04.24թ.